քերը կը քննէ . Նա երբ կը տեսնէ մեղաւորին լքեալ սիրտը փշրտուած՝ հոգին և անմխիթար արտասուքը՝ խղճին կը գթայ խղճին կը կարեկցի և անմիջապէս կը փրկէ . ամենեւին կարեւորութիւն չը տար մարդկանց դատաստանին , այլ տեսնելով մեղաւորին ապաշաւն ու դարձը՝ նորա հոգին կը մխիթարէ և վշտերը կը սփոփէ և այս ներքին սփոփանքը զօրութիւն և ոյժ կը տայ անկեալն համբերատար ոգւով ընդունելու մարդկային անիրաւութեան իւր գլխոյն վերայ տեղացած ամեն չարիքները . իսկ անիրաւներն ու չարերը որք իրենց ատելութեան ենթակային այս խոնարհ համբերատարութենէն , այս արիական նահատակութենէն և այս վսեմ անյիշաչարութենէն առանց պատկառելու իրենց չարութիւնը աւելի առաջ կը վարեն և իրենց դառնութեան թիւնի մինչև յետին կաթիլը կը ձգնեն նորա գլխոյն հեղուլ՝ թող սարսին ու սարսափին Աստուծոյ արդար դատաստանէն եւ իրենց վրայ գալիք բարկութենէն , թող յիշեն աններող պարտապահանջին առաջը և ամաչեն իրենց անգթութեան վրայ , թող իջնէ ամեն մարդ իւր սրտին խորը , թող քննէ իւր հոգւոյ ծալքերը և թող ունկն մատուցանէ անաչառ խղճին և իմանայ թէ որքան կ՚անիրաւէ իւր եղբօր դէմ՝ չարչարելով զնա եւ վշտացնելով և երբ իմանայ իւր անիրաւութիւնը թող զղջայ եւ խոստովանի իւր մեղքերը անոր . «Որ հաւատարիմ ու արդար է մեր մեղաց թողութիւն տալու և զմեզ ամեն անիրաւութենէ սրբելու» . Ա . Յովհ . Ա . 9 .

Ս . Գ . Շահանեան .

ՄԱՐԳԱՐԷԱԿԱՆ ՑԱՐԱԿՑՈՒԹԻՒՆ
ԸՆԴ ՄԷՋ
ՀԻՆ ԵՒ ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆԱՑ

ՅԱՌԱՋԱԲԱՆ

Թէ ՚ի հնումն և թէ ՚ի նորումս բազումք ստստեալ լինին զհնութենէ Աստուածաշնչոյ մատենից կամ զլինելոյն նորա սուրբ և աստուածեղէն տառ . Այլ թէ ՚ի յետնոց ոմանց առեն գրեալ այն իբր ազգային պատմութիւն ինչ , և ըստ բնոյ գրողին լի անհաւատալի այլաբանութեամբ , որով և յարակցութիւն նորա ընդ Նոր Կտակարանի՝ յորում նախամայնեալ ամենայն օրէնք և մարգարէութիւնք վերաբերին առ անձն , առ պաշտօն , առ փառս և պատիւ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի փրկչին ազգի մարդկան , մերժի և ճշմարտութիւն որոյ Աւետարանին սուր . Բանալի հիմն և նկարագրութիւն Նորոյ Կտակարանի է Հին Կտակարանն , որ ուրանայ զՀինն , ուրացեալ է և զՆորն .

Բայց Պօղոս մեծիմաստ Եպիսկոպոսն գեղեցիկ յանդիմանէ զշարաչար զառաջին աստուածեղէն մատենից , յասելն իւրում . «Յայս ամենայն վէհս որ արդեօք զարմացուցին զբեզ խորդաւանեցան աներևրելոյ՝ խուսափել կամեցեալ ՚ի նշանացն և ՚ի մարգարէութեանց . Այլ մի կարծեսցեն և յԱստուծոյ խուսափել , պահեաց նորա ՚ի հոգեշունչ պատգամսն այլ աստուածեղէն կնիք անգծելի յաւխաց . այն ինքն է աղխաղխումն երկուց Կտակարանաց . Բանալի անհակառակելի է այս ինչ , համեմատելոյն զայն Հնոյ Կտակարանի քան զՆոր Կտակարանն . Ձեր ՚ի մէջի այլ Նզովս , որ նոր յօրինել մատեան և մաքրել զՀրեայս . կամ խորդախել զայն առ ՚ի չնորհեալս քրիստոնէից , զոր հաւանելին . Ջուր է աւելի քան ամել զայգեանէ . ՚ի միաբանութենէ երկուց Կտակարանաց ստուգի ՚ի վերայ հասանելոյ . Թէ աստուածեղէն են երկոքեան . Մի է դիտաւորութիւն երկոցուն նոյն . և մի ուղղութիւն նպատակի . Նա յարդարէ զշաւիղս կատարելութեան , զոր եկեալ սորա ակն յանդիմանն ցուցանէ . Նա արկանէ զհիմն շինութեան . եւ սա զլխաւորէ . և զոր նա կանխամայնեաց , սա յառաջ մատուցեալ՝ զկատարումն եդոյ ամենայնի . Դէպք ազգաց Բ . հատոր , երես 223 .

Ուստի և ես առ ՚ի հաստատութեան ճշմարիտ գրութեան մեծիմաստ Հօրս . և ՚ի ստուգութիւն այնորիկ աշխատ կալայ ՚ի մի վայր ժողովել զամենայն մարգարէութիւնսն խօսեցեալս զՔրիստոսէ , որք ՚ի ծննդենէ աշխարհի մինչև ցգալուստ նորա գտանին ՚ի Սուրբ Գիրս Հնոյ Կտակարանի .

digitised by A.R.A.R.@

ունելով ինձ օգնական զվկայարանութիւն Ս. Գրոց եւ Հայոց Սրբոց մեր եւս օտար ազգաց, հարց և պատասխանի ձեւով. յուսալով զի բաւական լիցի այն բառնալ զդայթակղութիւն ուրացողացն զՇրշմարտութենէ և զապակցութենէ երկուց աստուածեղէն մատեանցս։

Գէորգ Աւետեան
Զարարեանց։

ՀԱՐՑ ԵՒ ՊԱՏԱՍԽԱՆԻ

Հարց. Զի որովհետեւ գլխաւոր առարկայ Նոր Կտակարանի է Տէրն մեր Յիսուս Քրիստոս եւ Աւետարանն Սուրբ, ասա. մի՞թ են երեւելի յատկութիւնք կամ հանգամանք անձին Քրիստոսի խօսեցեալ զնմանէ 'ի Հին Կտակարանի անդ։

Պատասխանի. Բազ 'ի յօրինակաց և 'ի խորհրդաւոր նշանաց Քրիստոսի եւ Աւետարանի նորին, որք գտանին 'ի հին օրէնսն 'ի պաշտամունս Եբրայեցւոց, այսմիքն սեղան և պաշտօնեայք նորա, Օրէնք եւ ապաստարան նորա. ժողովուրդ և քահանայապետք նորա. պատարագ և զենումն նորա, և այլն. են և պէտպէս յայտնի նկարագրութիւնք, որք են գուշակութիւնք վերաբերեալ առ Քրիստոս Փրկիչն մեր, բազմաք յառաջ քան զգալուստ նորա յաշխարհ 'ի փրկութիւն ազգի մարդկան։

Հ. Զի՞նչ է առաջին գուշակութիւն վասն գալստեան Քրիստոսի։

Պ. Ի Ծննդոց 'ի գլ. Գ. հմ. 15. ուր Աստուած ասէ յօձն, «Եղից թշնամութիւն 'ի մէջ քո և 'ի մէջ կնոջդ, և 'ի մէջ զաւակի քոյ և 'ի մէջ զաւակի դորա. նա ապաստեսցէ քում գլխոյ. և դու ապաստեսցես նորին գարշապարի։

Հ. Ուրանօր կատարեցաւ այս գուշակութիւն։

Պ. Ի Գաղատացւոց 'ի գլ. Դ. հմ. 4. ուր գրէ, «Այլ իբրեւ եկն լրումն ժամանակի առաքեաց Աստուած զՈրդին, որ եղեւ 'ի կնոջէ։

Եւ 'ի Յովհաննու առաջին 'ի գլ. Գ. հմ. 8. գրէ, «Որ առնէ զմեղս 'ի սատանայէ է, զի 'ի սկզբանէ սատանայ մեղանչէ, վասն այնորիկ յայտնեցաւ Որդին Աստուծոյ, զի լուծցէ զգործս սատանայի։ Որպէս է և այս բան Պօսիւէ եպիսկոպոսի յասել նորա. «Այլ մինչ ահիւ տագնապեն զմեզ ահաւոր գաւառատանք Աստուծոյ. պանչասցուք՝ զիա՞րդ առ նմին յուրախականն հայեցուցանէ 'ի վերս զմիտս. և անդրանդրն յօրէ կորստեան մերոյ յայտ յանդիման ցուցանէ զհանդերձեալն մեր ազատութիւն։ Օձիւն, որ բազմապատիկ սողոսկելովն տպաւորագոյնս նկարէր զվնասակար հրապոյրս և զպատրազական հնարս այսոյն չարի, յայտ առնէ Աստուած նախամօրն Եւայի և զնոցկալն նկարագիր զարժանին պատուհաս ասելի նորա պատրելոյ։ Հարկ 'ի վերայ կայր օձին ասելի լինել ամենայն կենդանեաց. զոր օրինակ և սատանայ անիծապարտ էր քան զամենայն արարածս. և որպէս 'ի վերայ լանջաց և որովայնի իւրոյ քարշել օձ ընդ երկիր. և սատանայ իրաւապէս թօթափեալ յերկնից, ուր ստեղծեալն էր, ոչ եւս վերականգնեսցի։

Հոգ ուտել ասացաւ օձին 'ի նշաւակ վայրաքարշ խորհրդոց, զորս ազգ 'ի մեզ սատանայ. և իւր իսկ խորհուրդք ամենայն երկրաքարշք են. զի ոչ այլ ինչ խորհի նա, բայց միայն ընդ մեզս։ Յանհաշտ թշնամութեան անդ մարդկային ազգի ընդ սատանայի սակն յայտնի տեսանեմք զյաղթանակն որ մեզ պատահել կայ։ Զի ահաւասիկ

Հ. Ուրանօր կատարեցաւ այս գուշակութիւն։

Պ. Ի Գաղատացւոց 'ի գլ. Դ. հմ. 4. ուր գրէ, «Այլ իբրեւ եկն լրումն ժամանակի առաքեաց Աստուած զՈրդին, որ եղեւ 'ի կնոջէ։

Եւ 'ի Յովհաննու առաջին 'ի գլ. Գ. հմ. 8. գրէ, «Որ առնէ զմեղս 'ի սատանայէ է, զի 'ի սկզբանէ սատանայ մեղանչէ, վասն այնորիկ յայտնեցաւ Որդին Աստուծոյ, զի լուծցէ զգործս սատանայի։ Որպէս է և այս բան Պօսիւէ եպիսկոպոսի յասել նորա. «Այլ մինչ ահիւ տագնապեն զմեզ ահաւոր գաւառատանք Աստուծոյ. պանչասցուք՝ զիա՞րդ առ նմին յուրախականն հայեցուցանէ 'ի վերս զմիտս. և անդրանդրն յօրէ կորստեան մերոյ յայտ յանդիման ցուցանէ զհանդերձեալն մեր ազատութիւն։ Օձիւն, որ բազմապատիկ սողոսկելովն տպաւորագոյնս նկարէր զվնասակար հրապոյրս և զպատրազական հնարս այսոյն չարի, յայտ առնէ Աստուած նախամօրն Եւայի և զնոցկալն նկարագիր զարժանին պատուհաս ասելի նորա պատրելոյ։ Հարկ 'ի վերայ կայր օձին ասելի լինել ամենայն կենդանեաց. զոր օրինակ և սատանայ անիծապարտ էր քան զամենայն արարածս. և որպէս 'ի վերայ լանջաց և որովայնի իւրոյ քարշել օձ ընդ երկիր. և սատանայ իրաւապէս թօթափեալ յերկնից, ուր ստեղծեալն էր, ոչ եւս վերականգնեսցի։

Հոգ ուտել ասացաւ օձին 'ի նշաւակ վայրաքարշ խորհրդոց, զորս ազգ 'ի մեզ սատանայ. և իւր իսկ խորհուրդք ամենայն երկրաքարշք են. զի ոչ այլ ինչ խորհի նա, բայց միայն ընդ մեզս։ Յանհաշտ թշնամութեան անդ մարդկային ազգի ընդ սատանայի սակն յայտնի տեսանեմք զյաղթանակն որ մեզ պատահել կայ։ Զի ահաւասիկ

digitised by A.R.A.R.@

ուեստարանի մէջ զաւակ Օրհնեալ, ո-
րով Ջախեացի գլուխ պատրոյլն, ան-
ձակոծեցի ասեմ ամբարտաւանու-
թիւն նորա. և խոյտառակեցի թա-
գաւորութիւն նորա ընդ ամենայն երկիր։ Զաւակն օրհնեալ է կուռածին
Քրիստոս, յորում միայն չմեղաւ Ադամ. քանզի եւ աստուածահրաշ
օրինակաւ ծագեաց յԱդամայ, յղանալով ոչ ի մարդկանէ, այլ ի Հոգւոյն
Սրբոյ։ Ապա սոլին շնաշխարհիկ զաւակաւ, կամ թէ ի ձեռն կնոջն՝ որ
զնոյն ծնաւ, որպէս ունին աստուածոր ընթերցուածք զանազանութիւնս, հան-
դերձեալ էր նորոգել զեղծեալ ազգ մարդկան, և բառնալ զզօրութիւն իշ-
խանի աշխարհիս, որ յիւրոյն ինչ ոչ եգիտ ի Քրիստոս. Վէպք ազգայ
Ա. հատոր, երես 253. և որ կնի նորին։

Հ. Զինչ է յետագայ յայտնի գուշակութիւն վասն Քրիստոսի։

Պ. Ի Ծննդոց գլ. ԺԸ. հմ. 18. և ԻԲ. հմ. 18. ուր ասէ Աստուած. «Ա-
յլ Աբրահամ լինելով լինիցի ազգ մեծ և ի բազում, և օրհնեսցի ի նա
ամենայն ազգ երկրի»։ Եւ եւս «Եւ օրհնեսցին ի զաւակի քում ամենայն
ազգ երկրի, փոխանակ զի լուար ձայնի իմում»։

Հ. Որով երեւի թէ այս խոստացեալ զաւակն է Քրիստոս։

Ի Գաղ. ի գլ. Գ. հմ. 8. գրի. «Յառաջագոյն գիտէր գիր, թէ ի
հաւատոյ անտի արդարացուցանէ Աստուած զհեթանոսս. յառաջագոյն
խօսեցաւ Աբրահամու. թէ ի քեզ օրհնեսցին ամենայն ազգ։ Դարձեալ
ի նոյն ի հմ. 16. ասէ՝ «Իսկ Աբրահամու խոստացան աւետիքն, եւ զաւակի նորա. և ոչ ասէ զզաւակսդ իբրեւ զբազմոց, այլ իբրեւ զմիոյ. թէ
և զաւակի քում, որ է Քրիստոս»։

Եւ ի Մատթ. ի ծննդաբանութեան Քրիստոսի գրի. «Գիրք ծննդեան
Յիսուսի Քրիստոսի որդւոյ Դաւթի, որդւոյ Աբրահամու»։ Ա. 7։

Զնոյն է տեսանել և յայս պանծալի բան Պօղոսի յասելն նորա վասն
խոստման Աստուծոյն ի զաւակի Աբրահամու օրհնելն ամենայն ազգաց.
այսինքն՝ խոստանայ Աստուած Աբրահամու ի նմա և ի զաւակի նորա,
օրհնիլ ամենայն ազգաց. զի ամենայն ազգ և ազինք՝ որ կուրացեալ մոռանային զԱրարիչ իւրեանց, նովաւ կամեցին յԱստուածգիտութիւն՝ յորում
սիրապէս և օրհնութիւն։ Սոփաւ հայր կարգեցաւ Աբրահամ ամենայն հաւատացելոց և զաւակ նորա ազգիւր օրհնութեան, որ արբուցանելոց էր զամենայն սիրելիս։

Աւասիկ շառաւիղն օրհնութեան խոստացեալ Եսայեայ, նոյն եւ ուղիղ և շառաւիղ Աբրահամու։ Վէպք ազգայ Ա. հատոր երես 272։

Հ. Բայց ի յԱբրահամու այլ ոմն եւս Աստուած զխոստումն գալստեան Քրիստոսի։

Պ. Սահակայ որդւոյ Աբրահամու, ասա այնմ թէ՝ «Եւ բազմացուցից ընդ-
զաւակ քո իբրեւ զաստեղս երկնից. եւ տայցի զաւակի քում ամենայն երկիրս այս. և օրհնեսցին ի զաւակի քում ամենայն ազգք երկրի»։ Ի Ծնընդոց ԻԶ. 4։

Զնոյն ասէ Աստուած և Յակոբայ որդւոյ Իսահակայ. «Եւ երկայնի զաւակ քո ասէ, իբրեւ զաստղ երկրի. և ընդարձակեսցի ընդ ծովակողմն և ընդ արեւելս. և ընդ հիւսիս և ընդ հարաւ. եւ օրհնեսցին ի քեզ ամենայն ազգք երկրի և ի զաւակ քում»։ Ի Ծնընդոց ի գլ. ԻԸ. հմ. 14։

Հ. Մարգարէսդ և Յակոբ որդի Իսահակայ վասն գալստեան Քրիստոսի։

Գ. Այո, զի 'ի ժամ մահուան իւրոյ խօսեցաւ ընդ որդւոյ իւրում Յուդայի և ասէ. «Մի պակասեսցի իշխան ի Յուդայ. և մի պետ յերանաց նորա. մինչև եկեսցէ նա, որոյ իւրն է հանդերձեալքն. և նա է ակնկալութիւն հեթանոսաց»: Ի Ծննդոց 'ի գլ. ԽԹ. համ. 10.

Հ. Զինչ՞ իմանաս թէ այս մարգարէութիւն կամ օրհնութիւն Յակոբու առ որդին իւր Յուդա է նախագուշակութիւն վասն գալստեան Քրիստոսի:

Գ. Նախ՝ զի յասելն թէ, մինչև եկեսցէ նա, որոյ իւրն է հանդերձեալքն, և նա է ակնկալութիւն հեթանոսաց, յայտնապէս նշանակէ զՔրիստոս, որ առաքեցաւ 'ի Հօրէ 'ի փրկութիւն հեթանոսաց, ըստ այնմ թէ. «Իսկ զոր Հայր օրհնեաց եւ առաքեաց յաշխարհ, դուք ասէք թէ հայհոյես: Յովհ. Ժ. 36: Դարձեալ թէ. «Որպէս զիս առաքեաց յաշխարհ, և ես առաքեցից զնոսա յաշխարհ: Եւ 'ի վերայ նոցա ես սուրբ առնեմ զանձն իմ. զի եղիցին և նոքա սրբեալք ճշմարտութեամբ: Այլ ոչ վասն նոցա միայն աղաչեմ, այլ և վասն ամենայն հաւատացելոց բանիւ նոցա յիս: Զի ամենեքեան մի իցեն, որպէս դու Հայր յիս. և ես 'ի քեզ. զի և նոքա 'ի մեզ իցեն. զի եւ աշխարհ հաւատասցէ, թէ դու առաքեցեր զիս: ԺԷ. 8—21: Երկրորդ՝ որ ասի. մի պակասեսցի իշխանութիւն 'ի Յուդայ, և մի պետութիւն յերանաց նորա, մինչև եկեսցէ նա. նշանակէ աւելին այնց մինչև ցգալուստն Քրիստոսի, որպէս և 'ի ծննդեանն Քրիստոսի ամենայն իշխանութիւն և պետութիւն, մահ և կեանք բարձաւ 'ի տանէ Յուդայ և էանց 'ի ձեռս Հռոմայեցւոց:

Երրորդ զի խոկ առնել էին զայս մարգարէութիւն վասն գալստեան Մեսիային, որում մինչ ցարդ ակնկալեն. զի գայցէ նա հաստատել զաթոռն Դաւթի: Եւ եթէ յայս մոլորութեան կացցեն Հրէայք մինչև 'ի վախճան աշխարհի, տեսցեն զգալուստ Քրիստոսի. բայց յայնժամ, յորժամ գայցէ փառօք և հրեշտակօք 'ի դատել զազգ մարդկան, ուր կոծ և ապաշաւ իւրեանց յայնժամ անօգուտ լինի:

Այնպէս է տեսանել և առ Պօղոսէ եպիսկոպոսին յասելն նորա. Եթէ Յակոբ՝ ասէ, հոգւովն զխորհուրդ այսր ընտրութեան. քանզի իբրև 'ի պարգել հոգւոյն շուրջ պատեալ որդիքն զմահճօրն՝ հայցէին զօրհնութիւն բարւոյ հօրն, եցոյց նմա Աստուած զհանդերձեալ վիճակ ցեղիցն երկոտասանից յերկրին աւետեաց:

Համառօտք էին բանքն, այլ հոծ մեծահրաշ իմաստիւք:

Գերապանծ էին ամենայն պատգամքն, զորս խօսեցաւ վասն եղբարց Յուդայ, և 'ի վեր քան զմարդոյ աստուածազգեցիկ զօրութիւն. այլ 'ի ժամանել առ Յուդա, խոյանայ և եւս որոտալից լեզուն, ասէ, Յուդա, ըզքեզ օրհնեսցեն եղբարք քո. ձեռք քո 'ի վերայ թիկանց թշնամեաց քոց. երկիր պագցեն քեզ որդիք հօր քո, կորիւն առիւծու Յուդա, 'ի շառաւիղէ ելեր որդեակ իմ. ելեր բազմեցար. ննջեցեր իբրև զառիւծ. և իբրև զկորիւն առիւծու, ո՞ յարուսցանէ ըզնա: Մի պակասեսցի իշխան 'ի Յուդայ. և այլն որ զկնի:

Կարգ բանից մարգարէութեանս ակնարկէ ըստ գրոյն 'ի բաժինն որ հասանէր Յուդայի յերկրին աւետեաց: Բայց յետին բանքն՝ որպէս զիարդ եւ կամք իցեն իմանալ, ցուցանէ նա ինքն որ յԱստուծոյ գալոց էր, պաշտօնեայ և թագաւորական կամաց նորա ըն-

digitised by A.R.A.R.@

բունն առնուլ, և Թագաւոր նորոյ ժողովրդեան, այն ինքն է Մեսիայն օծեալ Տեառն։

Առ Յուդա միայն խօսի Յակոբ յայտնապէս զՄեսիայէ, յորմէ ծնանելոցն էր. այլ 'ի նմա բովանդակէ համգամայն համօրէն ազգին. զի զկնի վերադառնալոյն դարձեալ ընդ դրօշիւ Յուդայի գումարելոց էին մնացորդք ժողովրդեանն։ Ի սոյն մարգարէութիւն Յակոբայ ակն յանդիման երեւի. եւ կամի իմն ասել նահապետն՝ թէ յաւուրս Մեսիայի սպառեսցի ամենայն իշխանութիւն 'ի տանէն Յուդայ, որ է բնաբարձ քակտումն տէրութեան։

Արդ՝ աւանիկ զժամանակ աւուրց Մեսիային 'ի կրկին նշանաց յայտ առնէ, 'ի քանդելոյ իսպառ թագաւորութեան Յուդայի և ժողովրդեան Հրէից, և 'ի յառնելոյ նորոյ թագաւորութեան ոչ միոյ միայնոյ ժողովրդեան, այլ ամենայն ժողովրդոց, որոց ամենեցուն պետ եւ ակնկալութիւն Մեսիայն լինի։ Վէպք Ա. հատ. 279.

Հ. Յետ այսորիկ այլ ոք մարգարէացա՞ւ վասն գալստեան Քրիստոսի փրկչին մերոյ։

Պ. Աստուածախօսն Մովսէս մեծն 'ի մարգարէս 'ի գիրս Օրինաց 'ի գլ. ԺԸ. հմ. 15 և 18—19, ասէ. “Մարգարէ յեղբարց քոց իբրեւ զիս յարուսցէ քեզ տէր Աստուած քո, նմա լուիջիք”։ Եւս թէ, “Մարգարէ յարուցից նոցա յեղբարց իւրեանց իբրեւ զքեզ. եւ տաց զպատգամս իմ 'ի բերան նորա. եւ խօսեսցի ընդ նոսա, որպէս և պատուիրեցից նմա։ Եւ մարդ՝ որ ոչ լուիցէ, զոր խօսիցի մարգարէն յանուն իմ, ես խնդրեցից վրէժ 'ի նմանէ”։

Հ. Բայց ուստի՞ հաւաստի թէ այս մարգարէութիւն Մովսիսի էր վասն գալստեան Քրիստոսի։

Պ. Սուրբն Ստեփաննոս նախավկայն Քրիստոսի, յորժամ առաջի քահանայապետին նկարագրէր վկայութեամբ նախահարց իւրեանց զգալուստ Քրիստոսի, եբեր և զայս մարգարէութիւն Մովսիսի նշանակեալ 'ի Քրիստոս, ասելով՝ “Այս Մովսէս, որ ասաց ցորդիսն Իսրայելի, Մարգարէ ձեզ յարուսցէ տէր Աստուած յեղբարց ձերոց իբրեւ զիս նմա լուիջիք. սա է՝ որ եղեւ յեկեղեցւոջն յանապատի ընդ հրեշտակին, որ խօսեցաւ ընդ նմա 'ի լերինն Սինայ և ընդ հարսն մեր, որ ընկալաւ զպատգամս կենդանիս տալ մեզ”։ Գործ. Ա. ժէ. 37, 38.

Հ. Բայց ո՞չ ոք յայլոց երեւելի մարգարէից՝ այսինքն Եսայեա, Երեմիա, Եղիա, Եղիսէ, կամ այլ ոք 'ի յոգնաթիւ մարգարէից, էր նման Մովսիսի։

Պ. Այո, ոչ մին 'ի նոցանէ եղեւ նման Մովսիսի, բայց միայն Քրիստոս փրկիչն մեր, որ կատարեաց բազում հրաշագործութիւնս 'ի մէջ ժողովրդոցն Իսրայելի, որպէս Մովսէս 'ի Եգիպտոս և յանապատին (*)։

Ըստ այսմ է և բան Պօղոսի եպիսկոպոսին յասելն իւրում. “Ցոր կամեցեալ Մովսէսի ակնկալութիւն ժողովրդեանն 'ի նա հաստատել, վկայէ հաստատութեամբ գալստեան մեծի մարգարէին, որ ծնանելոց էր յազգէն Աբրահամու, Իսահակայ և Յակոբայ”. “Մարգարէ՝ ասէ, յեղբարց քոց իբրեւ զիս յարուսցէ քեզ Տէր Աստուած քո, նմա լուիջիք”։ Եւ ո՞ արդեօք մարգարէն այն իցէ համգոյն Մովսէսի, օրէնսդիր իբրեւ զՄովսէս. եթէ ոչ նա ինքն Մեսիայ, որ բանիւ իւրով

(*) Բայց հրաշագործութիւն Քրիստոսի էր 'ի մարդասիրութենէ՝ և Մովսէսին՝ սա 'ի ընկճել զխստապարանութիւն փարաւոնի։

digitised by A.R.A.R.@

առաջնորդեսցէ և արբեսցէ զամենայն տիեզերս ։

Քրիստոսի էր անկ նախ առաջին զատուցանել Ժողովուրդ նոր, որում և տայն. «Պատուիրան նոր տամ ձեզ»։ և դարձեալ. «Եթէ սիրէք զիս, զպատուիրանս իմ պահեսջիք»։ և ևս յայտնագոյն. «Ասացաւ առաջնոյն թէ մի սպանաներ, բայց ես ասեմ ձեզ», և այլն որ զկնի նովին ոճով և նովին իշխանութեամբ ։

Սոյն սա է ապա նոր մարգարէն նմանեալ Մովսէսի, առաջն նորոյ օրինաց, և զնմանէ ասաց մեզ Մովսէս 'ի գուշակել իւրում զգալուստ նորա, եթէ «Նմա լուիջիք»։ և ահա 'ի լերանն խոստմանս այսորիկ ինքն իսկ Աստուած որոտայ 'ի բարձանց զայս բարբառ աստուածային. «Դա է որդի իմ սիրելի ընդ որ հաճեցայ, դմա լուարուք»։

Նոյն մարգարէն էր և նոյն Քրիստոս զոր տպաւորեաց Մովսէս օձիւն պղնձեաւ, զոր կանգնեաց յանապատին ։ Հարկ էր մարդկային ազգի 'ի այն հայելով օձ. այսինքն է 'ի նա հաւատով՝ որպէս ինքն իսկ մեկնաբանէ՝ բժշկել 'ի խայթուածոյ հնոյ օձին, որով թունաւորեալք մահանամք ամենեքեան ։ Եւ ընդէր է ինձ զօձն միայն պղնձի ածել 'ի յիշատակ ։ Ամենայն օրէնք Մովսէսի, ամենայն զոհք նորա, քահանայն մեծ կարգեալ 'ի նմանէ այնչափ խորհրդական արարողութեամբք, մուտ նորա 'ի սրբութիւնսն. համառօտ ասել՝ ամենայն իսկ պաշտամունք հրէական օրինաց համարէին՝ յորում ամենայն ինչ արեամբ սրբէր, և զառն անգամ զենեալ 'ի մեծի տօնին որ զատիկն կոչէր՝ 'ի յիշատակ ազատութեան ազգին. այս ամենայն ոչ այլ ինչ նշանակէր՝ բայց միայն զՔրիստոս, որ արեամբն իւրով փրկագործեաց զժողովուրդն Աստուծոյ ։ Վէպք ազգաց, Ա. հատ. երես 295. ըստ այսմ է և բան որբազան Առաքելոյն Պօղոսի յԵբրայեցիսն 'ի գլ. Թ. համ. 1_15 ։

Հ. Յետ որոյ այլ ո՞ք եղեւ երեւելին 'ի մարգարէից, որ զբազում գուշակութիւնս արար զՔրիստոսէ ։

Պ. Դաւիթ մարգարէն՝ որ նախաձայնեալ է 'ի սաղմոսարանի իւրում զբազում նշանաւոր յայտնութիւնս զՔրիստոսէ, այսինքն նկարագրէ զնորին մարդեղութիւնն, զչարչարանս, զհամբարձումն, զպէսպէս պաշտամունս, զմարգարէութիւն, զքահանայութիւն, զթագաւորութիւն և այլն, զոր օրինակ.

(Շարունակելի.)

ԱՄԵՆԱՊԱՏԻՒ ՊԱՏՐԻԱՐՔ ԱՍՈՐՈՑ
ՅԱՆԳՂԻԱՅ

ՃԸՆՉ անուն լրագիրն հետեւեալն կը հրատարակէ ։

Անգղիոյ եպիսկոպոսապետ 'Քանթըրպըրի հրաւիրեց Ասորոց Ամեն. Պատրիարքն, որ առաջին կարգի Անձինք նշան ունի, և Երուսաղէմի եպիսկոպոսն 'ի ճաշ, փառաւոր ընդունելութեամբ ընդունելով և եկեղեցական զգեստով ուղղակի եկեղեցին տանելով ։ Երբ համառօտ աղօթքն աւարտեցաւ, 'Քանթըրպըրի հրաւիրելոց առջեւ ճաշ մի կարգաց. յն-

digitised by A.R.A.R.@